



Իննա ՆԵՐՍԵՍՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի փեստության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչի օգնական*

**ՓՈՐՉԱԳԵՏԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՅՈՒՅՑ
ԳԻՏԱՐԿԵԼՈՒ ՏԻՄՆԱՏԱՐՑԸ ՀՏ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

1. «ապացույց», «ցուցմունք» և «բացատրություն» հասկացությունների առանձնահատկությունները և դրանց սահմանման հարցերը:

Նախքան բացատրությունը՝ որպես ապացույց օգտագործելու իրավական հնարավորությունները դիտարկելը, հարկ ենք համարում դիտարկել «ապացույց», «ցուցմունք» և «բացատրություն» հասկացությունների սահմանումները:

Համաձայն Ա. Մ. Սուքիասյանի հայոց լեզվի բացատրական բառարանի՝ ապացույց նշանակում է փաստ, փաստարկ, փաստարկություն (որևէ բանի ճշմարտությունը հաստատող)¹: Իսկ ըստ հայերենի օնլայն բառարանի՝ ապացույց նշանակում է անհերքելի փաստ՝ փաստարկ, որ հաստատում է որևէ բանի ճշմարտությունը²:

Եթե անդրադառնանք ապացույցի իրավաբանական բովանդակությանը և նշանակությանը, ապա աննկատ չենք կարող թողնել այն, որ դատավարական իրավունքում լայն կիրառվող այս հասկացությունն ունի օրենսդրական բազմազան սահմանումներ, բայց դատավարական իրավունքի բոլոր ճյուղերում իմաստային առումով ունի մեկ համընդհանուր նշանակություն:

Այսպես, օրինակ, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետագոտման և գնահատման հիման վրա դա-

տարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը³: Համաձայն ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի՝ վարչական գործով ապացույցներ են համարվում նշված օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ձեռք բերված տեղեկություններն այն փաստերի մասին, որոնք հիմք են հանդիսանում դատարանի կողմից այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու, որոնցով հիմնավորվում են գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք վարչական գործերի ճիշտ քննության և լուծման համար ունեն նշանակություն⁴:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի սահմանում ապացույցի հասկացությունը: Կարծում ենք, որ դատավարական այդպիսի բարձր նշանակություն ունեցող եզրույթի հասկացության սահմանումը անհրաժեշտ է նախատեսել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում է այն բոլոր ապացույցների տեսակները, որոնք կարող են հետագոտվել և գնահատվել վարչական գործի քննության շրջանակնե-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԳԱՏԱԿԱՆ
Իշխանություն

րում: Դրանք են՝ վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները: Սակայն հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օրենսդիրն ապացույցների նման դասակարգման շրջանակներում երկու անգամ է օգտագործել ցուցմունք եզրույթը, դրանով իսկ սահմանել ցուցմունքի երկու տեսակ (վկայի և փորձագետի ցուցմունք): Օրենսդրի նշված մոտեցմանը հարկ ենք համարում անդրադառնալ «ցուցմունք» եզրույթի սահմանումները դիտարկելուց և ներկայացնելուց հետո:

Իսկ ի՞նչ է ցուցմունքը և ո՞րն է դրա դատավարական նշանակությունը: Համաձայն Ա. Մ. Սուքիասյանի հայոց լեզվի բացատրական բառարանի՝ ցուցմունք նշանակում է վկայություն⁵: Իսկ մեծ իրավաբանական բառարանի համաձայն՝ ցուցմունք նշանակում է փաստական հանգամանքների վերաբերյալ անձի այն հաղորդումը, որը նա տալիս է հարցաքննության ժամանակ⁶: Ալնհայտ է դառնում, որ «ցուցմունք» հասկացությունն ընդգրկում է «վկայություն» և «հարցաքննություն» հասկացությունները և դիտարկվում է որպես այդ եզրույթների հոմանիշ: Ռ-Վ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է վկայի ցուցմունքի հասկացությունը, մասնավորապես վկայի ցուցմունք է համարվում վկայի իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ բանավոր ձևով այն հաղորդումները դատարանին, որոնք վարչական գործի ճիշտքնության և լուծման համար ունեն կարևոր նշանակություն (69-րդ հոդվածի 1-ին մաս): Հարկ ենք համարում ընդգծել այն, որ «ցուցմունք տալը» իրենից ենթադրում է «որևէ տեղեկություն վկայության ձևով ներկայացնելը», այն դեպքում, երբ բացատրություն տալուց անձն ըստ էության «չի ներկայացնում որևէ վկայություն», այլ միայն պարզաբանում է այն, ինչն արդեն հայտնի է:

Իսկ ի՞նչ է բացատրությունը և ո՞րն է դրա իրավական նշանակությունը: Այս հարցերի պատասխանը այն անկյունա-

քարն է, որի հիման վրա կարելի է դատողություններ անել բացատրությունը՝ որպես ապացույցի տեսակ դասակարգելու մասին: Համաձայն Ա. Մ. Սուքիասյանի հայոց լեզվի բացատրական բառարանի՝ բացատրություն նշանակում է մեկնաբանություն, պարզաբանություն, լուսաբանություն⁷: Համապատասխանաբար բացատրությունը՝ որպես դատավարական փաստաթուղթ, պետք է կրի որևէ օբյեկտի պարզաբանման կամ լուսաբանման նշանակություն, այն չի կարող ուղղակի վկայություն (ցուցմունք) լինել, քանի որ ի տարբերություն վկայության, բացատրությունով հայտնի չի դառնում նոր հանգամանք, այլ լուսաբանվում է արդեն հայտնի դարձած իրողությունը:

2. Փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը դատավարական իրավունքում:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները: Ալնհայտ է, որ օրենսդրի կողմից նման իրավադրույթի սահմանումը հիմք է հանդիսանում փորձագետի եզրակացությունը որպես նաև ցուցմունք դիտարկելու կամ փորձագետի կողմից տրված եզրակացության վերաբերյալ ցուցմունք տալու կամ վերցնելու համար: Սակայն հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը որպես դատավարական փաստաթղթեր կրում են այլ բնույթ, իսկ փորձագետի հարցաքննությունը հետապնդում է փորձագիտական եզրակացության լուսաբանման նպատակ:

Նախքան նշված հարցերով հետազոտություն և վերլուծություն անելը, հարկ ենք համարում ներկայացնել «փորձագիտական եզրակացություն» հասկացության սահմանումները: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի՝ փորձագետի եզրակացությունը գործի



քննության ընթացքում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով ձեռք բերված գրավոր փաստաթուղթն է, որը տրվում է փորձաքննությունն նշանակելու մասին որոշմամբ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով: Համաձայն իրավաբանական բառարանների՝ փորձագետի եզրակացությունն է համարվում ապացույց հանդիսացող գրավոր փաստաթուղթը, որով փորձաքննությամբ նշանակված հարցերի վերաբերյալ փորձագետը տալիս է հիմնավոր պատասխաններ⁸: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում «փորձագիտական եզրակացություն» հասկացության սահմանումը, սակայն հարկ ենք համարում նշել, որ օրենսդրական և ղոկտրինալ սահմանումները թույլ են տալիս պնդելու այն, որ փորձագիտական եզրակացությունը դատավարական փաստաթուղթ է, որը ապացույցի տեսակ է համարվում և, որի հիմնական նպատակն է դատական գործում ծառայած խորը մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերին տալ հիմնավոր պատասխան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է լրացուցիչ և կրկնակի փորձաքննության ինստիտուտը, որը կարծում ենք, որ կարող է էլ ավելի արդյունավետ գործել օրենսդրական որոշակի փոփոխությունների կատարման արդյունքում:

Այսպես, օրինակ, ՀՀ վարչական դատավարության 40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե դատարանը կասկածներ ունի փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ,

կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի: Կարծում ենք, որ մասն կարգավորումները որոշակի չափով հարթում են փորձագետի կողմից հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ փորձագիտական եզրակացություն ստանալու հարցում առաջացող հնարավոր խնդիրները:

Սակայն հարկ ենք համարում վերլուծության ենթարկել ՀՀ վարչական դատավարության 40-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները, որոնց համաձայն՝ դատարանը կարող է որոշում կայացնել գրավոր եզրակացություններ կայացրած փորձագետին դրա վերաբերյալ ցուցմունք տալու նպատակով դատարան հրավիրելու վերաբերյալ, եթե դա անհրաժեշտ է գործի առանձին հանգամանքներ պարզելու համար և մասն պայմաններում փորձագետի ցուցմունք տալու նկատմամբ կիրառվում են վկայի ցուցմունք տալուն վերաբերող կանոնները: Կարծում ենք, որ գործի առանձին հանգամանքները պարզելու դեպքում փոփոխվում է մասն պարզման ենթակա օբյեկտը, քանի որ «գործի առանձին հանգամանքներ» բառակապակցությունն ինքնին մատնանշում է մերկայացված փորձագիտական եզրակացության առարկայից դուրս եկող հանգամանքները: Նման պայմաններում, կարծում ենք, որ փորձագետը չպետք է ցուցմունք տա, այլ պետք է նշանակվի լրացուցիչ փորձաքննություն, համապատասխանաբար գործի առանձին հանգամանքների պարզումը ևս մեկ իրավական հիմք է լրացուցիչ փորձաքննության նշանակմանը: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել մասն այն հանգամանքը, որ ցուցմունքը, ինչպես արդեն պարզաբանվել էր, հանդիսանում է այս կամ այն հանգամանքի մասին վկայություն և փորձագետի կողմից փորձագիտական եզրակացության հիման վրա գործի առանձին հանգամանքների պարզումը չի

կարող որպես վկայություն որակվել:

Կարծում ենք, որ ցանկացած դեպքում փորձագետի կողմից փորձագիտական եզրակացության վերաբերյալ հարցաքննությունը պետք է ամրագրվի դատավարական այլ փաստաթղթի ձևով, այն է՝ բացատրությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը պետք է սահմանի փորձագետի կողմից բացատրություն տալու իրավունքը:

3. Փորձագետի բացատրությունը որպես ապացույց օգտագործելու հիմնահարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ինչպես արդեն նշվել էր, սահմանում է ապացույցների տեսակների նեղ շրջանակ: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները: Նշված հոդվածի ուժով բացատրությունն ապացույց չի հանդիսանում:

Հարկ ենք համարում անդրադառնալ ռուսական իրավական մտքին: Օրինակ, Օ. Յա. Մամեդովը գտնում էր, որ բացատրությունն ունի ապացուցողական նշանակություն⁹: Նույն տեսակետն էր պաշտպանում Վ.Ս. Բալաշկինը, պնդելով, որ բացատրությունը չի կարող դիտարկվել որպես «այլ փաստաթուղթ», քանի որ այն ունի ապացուցողական նշանակություն և կարող է որոշակի նշանակություն ունենալ ապացույցների հետազոտման և գնահատման փուլերում¹⁰:

Համաձայն ՌԳ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որպես ապացույց թույլատրվում են գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկայի ցուցմունքը, գրավոր և իրեղեն ապացույցները, ատոլիտ և վիդեո ձայնագրությունները, փորձագետի եզրակացությունը: Համաձայն ՌԳ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխի (ապացույցներ և ապացուցում վերնագրով) 68-րդ հոդվածի 1-րդ մա-

սի՝ գործին մասնակցող անձինք տալիս են բանավոր կամ գրավոր բացատրություններ իրենց հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք նշանակություն ունեն գործի ճիշտ քննության և լուծման համար: Կարծում ենք, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդրի նման մոտեցումը վարչական դատավարությունում թույլատրելի և օգտագործվող ապացույցների շրջանակը սահմանելու հարցում ողջունելի է, քանի որ բացատրությունը իրապես կարող է պարունակել գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկություն: Օրինակ, իրավակիրառական պրակտիկան չի կարող կաշկանդվել դեպքերով, երբ փորձագետի կողմից տրված եզրակացությունը և դրա բացատրությունն իրար հակասում են կամ առաջացնում են անորոշություն: Ապա այս պարագայում բացատրությունն ակամայից ստանում է ապացույցի ուժ, քանի որ վկայում է փորձագետի կողմից երկակի և հակասական տեղեկատվության տրամադրելու մասին:

Հարկ ենք համարում նաև վկայակոչել ՌԳ վարչական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 7-րդ մասը, որի համաձայն՝ փորձագիտական եզրակացության հրապարակումից հետո փորձագետը կարող է տալ անհրաժեշտ պարզաբանումներ և պարտավոր է պատասխանել գործին մասնակցող անձանց և դատարանի հարցերին:

Կարծում ենք, որ փորձագիտական եզրակացության պարզաբանման նպատակով հարցուպատասխանի ենթարկված փորձագետի կողմից տրված միակ դատավարական փաստաթուղթը պետք է համարվի բացատրությունը, այլ ոչ թե ցուցմունքը, և, ունենալով ապացուցողական նշանակություն փորձագետի եզրակացությունը պետք է հանդիսանա ապացույցի տեսակ:

Սակայն հարկ ենք համարում պատասխանել նաև այն պնդմանը, որ ցուցմունքը կրում է փորձագետին սուտ տեղեկատվություն տալուց զապող բնույթ՝ այն իմաստով, որ փորձագետը մախազգու-



շացվում է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին, իսկ բացատրություն տալու դեպքում նա չի զգուշացվել ու սուտ բացատրություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: ՀՀ վարչական դատավարության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ զիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատարանը նախազգուշացնում է փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին և դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը: Այսպիսով, անկախ այն հանգամանքից, թե որ կողմի միջնորդությամբ է նշանակվել փորձաքննությունը, փորձաքննության նշանակման մասին որոշումը ընդունում է դատարանը և դատարանը նախազգուշացնում է փորձագետին ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար, ինչի համար փորձագետը ստորագրություն է տալիս: Ուստի բացատրություն փորձագիտական եզրակացությանը կից փաստաթուղթ է (անկախ նրանից այն բանավոր է թե գրավոր), քանի որ փորձագետից բացատրություն վերցնելու միակ նպատակը փորձագիտական եզրակացության բարդ և մասնագիտական եզրաբանության պարզաբանումը կամ լուսաբանումն է: Համապատասխանաբար արդեն իսկ սուտ եզրակացության համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված փորձագետին լրացուցիչ անգամ քրեական պատասխանատվության մասին

նախազգուշացնելու կարիք չի առաջանում: Եվ, համապատասխանաբար փորձագետին կեղծ բացատրություն տալուց զսպելու առաջին և հիմնական միջոցը՝ ակնհայտ կեղծ եզրակացության համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացումն է, որի համար փորձագետն արդեն իսկ ստորագրություն է տալիս:

4. Եզրակացություն և առաջարկություններ:

Հիմնվելով վերը շարադրված դրույքների, մոտեցումների և վերլուծության վրա առաջարկում ենք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել հետևյալ կերպ՝

«2. Ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը և բացատրությունը, գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները»:

Հիմնվելով վերը շարադրված դրույքների, մոտեցումների և վերլուծության վրա առաջարկում ենք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերը փոփոխել հետևյալ կերպ՝

«4. Փորձագետը կարող է գրավոր կամ բանավոր ձևով բացատրություն ներկայացնել փորձագիտական եզրակացության վերաբերյալ կողմերի միջնորդությամբ կամ դատարանի որոշմամբ: Փորձագետը պարտավոր է պատասխանել փորձագիտական եզրակացության վերաբերյալ լրացուցիչ հարցերին»,

«6. Փորձագիտական եզրակացության և (կամ) բացատրության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում, ինչպես նաև գործի առանձին հանգամանքներ պարզելու նպատակով, դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով մինևնույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության)»:

- ¹ Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2-րդ հրատարակություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, 1242 էջ, էջ 82:
- ² Հայերենի օնլայն բառարան /<http://bararanonline.com/> (06.11.2018):
- ³ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 09.04.2018 թվականի դրությամբ / www.arlis.am.
- ⁴ Кодекс административного судопроизводства РФ, ред. от 19.07.2018, N 21-ФЗ / <http://www.consultant.ru>.
- ⁵ Սուքիասյան Ա.Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2-րդ հրատարակություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, 1242 էջ, էջ 1137:
- ⁶ Большой юридический словарь / https://petroleks.ru/dictionaries/dict_big_law16.php (06.11.2018).
- ⁷ Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2-րդ հրատարակություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, 1242 էջ, էջ 155:
- ⁸ Большой юридический словарь “Академик”/<https://jurisprudence.academic.ru/> (11.11.2018).
- ⁹ Мамедов О.Я., Объяснение в системе доказательств по уголовному делу, научная статья / <https://cyberleninka.ru/> (11.11.2018).
- ¹⁰ Балакшин В.С., Объяснение как доказательство в уголовном и административном судопроизводстве//Российский юридический журнал, 2012, №5, с.124-126.



RESUME - РЕЗЮМЕ

EXPLANATION OF THE EXPERT AS EVIDENCE IN ADMINISTRATIVE PROCEDURE LAW OF THE RA

Inna Nersesyan

PhD Student at the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Assistant Head of Department of Civil Law and Process of the Russian-Armenian University

This scientific article presents doctrinal and legislative definitions of the concepts of evidence, expert opinion, testimony and explanation. Investigated and analyzed legal norms of the Code of Administrative Procedure of the RA. The experience of the Russian Federation is presented in the framework of the topic of this article. There are also certain proposals for amending the Code of Administrative Procedure of the Republic of Armenia.

Keywords: *evidence, expert opinion, testimony, explanation.*

ОБЪЯСНЕНИЕ ЭКСПЕРТА КАК ДОКАЗАТЕЛЬСТВО В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Инна Нерсесян

Аспирант кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, помощник заведующего кафедрой гражданского права и процесса Института права и политики Российско-Армянского университета

В данной научной статье представлены доктринальные и законодательные определения понятий «доказательство», «заключение эксперта», «показание и объяснение эксперта». Исследовано и проанализировано законодательство об административном судопроизводстве РА в части правовых установок, касающихся доказательств. Представлен опыт РФ в рамках темы данной статьи. Представлены также определенные предложения о внесении изменений в Кодекс административного судопроизводства РА.

Ключевые слова: *доказательство, заключение эксперта, показание, объяснение.*

Բանալի բառեր - *ապացույց, փորձագրի եզրակացություն, ցուցմունք, քաջաբերություն:*

Ի. Ներսեսյան - Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչի օգնական, էլ. փոստ՝ nersesyan-1994@bk.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 01.05.2019, արվել է գրախոսության՝ 01.05.2019, երաշխավորվել է Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ի.գ.ք. Յ. Հայրապետյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱՎԱԿ
Իշխանություն